

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Բ Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի՝

15.2-րդ և 15.3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15.2 ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին, (իսկ 7325 և 7326 ծածկագրերից՝ սև մետաղից սալիկները) դասվող սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում «Ժամանակավոր ներմուծում» և «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 7201, 7204) ապրանքների վրա), ինչպես նաև «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով ձևակերպված և հետագայում ներմուծվող, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով և ընթացակարգերով ԵԱՏՄ անդամ երկրներ վերամշակման նպատակով տեղափոխվող և հետագայում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների վրա):

15.3. գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի և սպառված առաջնային մարտկոցների և սպառված էլեկտրական կուտակիչների (բացառությամբ «Ժամանակավոր ներմուծում» և «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող ներքոհիշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների) արտահանման համար (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում

բազային տուրքի 2
չափով

«Ժամանակավոր ներմուծում» և «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների վրա), ինչպես նաև «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով ձևակերպված և հետագայում ներմուծվող, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով և ընթացակարգերով ԵԱՏՄ անդամ երկրներ վերամշակման նպատակով տեղափոխվող և հետագայում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների վրա)։

ա) ԱՏԳ 760200, 7802 00 0000, 7902 00 0000, 8108 30 0000, 854810 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր տոննայի համար

բազային տուրքի 4
չափով

բ) ԱՏԳ ԱԱ 8104 20 0000, 8111 00 1900 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր տոննայի համար

բազային տուրքի 8
չափով

գ) ԱՏԳ ԱԱ 7404 00, 8110 20 0000 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր տոննայի համար

բազային տուրքի 1
չափով

դ) ԱՏԳ ԱԱ 7503 00, 8112 22 0000 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր տոննայի համար

բազային տուրքի 2
չափով

ե) ԱՏԳ ԱԱ 8002 00 0000, 8102 97 0000, 8105 30 0000, 8106 00 1000, 8107 30 0000, 8101 97 0000, 8113 00 4000 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր տոննայի համար

բազային տուրքի 4
չափով

զ) ԱՏԳ ԱԱ 8103 30 0000, 8109 30 0000, 8112 13 0000, 8112 52 0000, 8112 92 210 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր կիլոգրամի համար

բազային տուրքի 2
չափով